ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՆՎԻՐՎՈՒՄ Է Ա. ԵՍԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67
Ե 540

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան

Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբուզյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Վ.Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Քոչարյան

Ե 540 ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2015.–208 էջ:

Ժողովածուն ամփոփում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2014թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած գիտաժողովի նյութերը՝ նվիրված ականավոր իրավաբան Աղասի Եսայանի ծննդյան 100-ամյակին:

Այն ընդգրկում է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի վերաբերյալ գիտական աշխատանքներ, որոնք աչքի են ընկնում բարձրացված հարցերի արդիանակությամբ, տեսական խորը վերլուծություններով և գործնական նշանակությամբ: Ժողովածուի մեջ տեղ են գտել ինչպես ճանաչված գիտնականների, այնպես էլ երիտասարդ դասախոսների ու ասպիրանտների աշխատանքները: Կարող է օգտակար լինել իրավաբան տեսաբանների, իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների ներկայացուցիչներին, իրավունքի տարբեր հարցերով հետաքրքրվողներին:

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67

ISBN 978-5-8084-1933-9

© ԵՊՀ հրատ., 2015
© Հեղ. խումբ, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վիգեն Քոչարյան
"PERINCEK V. SWITZERLAND"ԳՈՐԾՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 ՎՃՌԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ 5

Լևոն Գևորգյան
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ ՉԻՐԱԳՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ 18

Անի Սիմոնյան
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 25

Արթուր Վաղարշյան
ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 35

Տարոն Սիմոնյան
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ՈՐՈՇ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ 56

Ալվարդ Ալեքսանյան
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ 68

Նարինե Դավթյան
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԻ ՓՈՒԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 87

Գևորգ Դանիելյան
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ 98

Վարդան Այվազյան

ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԻԶՄԻ (ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ) ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 124

Անահիտ Մանասյան
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 140

Արա Գաբուզյան
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ 149

Սամվել Դիլբանդյան
ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 160

Аида Искоян
ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ЭКОЛОГИЧЕСКОГО ПРАВА: МЕЖДУНАРОДНЫЕ И НАЦИОНАЛЬНЫЕ ПРЕДПОСЫЛКИ 174

Գրիգոր Բեքմեզյան
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ 190

THE COMPLEXITY OF LAW DETERMINATION AND SOME DISCERNIBLE PATTERNS WITHIN IT IN TRANSITIONAL AND UNSTABLE SOCIETIES

Taron Simonyan

Assisting professor in the YSU Chair of Theory and History of State and Law, Candidate of Legal Sciences

One of the contemporary issues of the transitional and unstable societies is the emergence of social and legal order in the circumstances, where no order can be found. The determination of law in such societies is also a very big problem taking into account that the complexity of social behaviour in transitional and unstable period of social change gives no opportunity for determination of a predictable behaviour and thus, creates problems for legal certainty and the whole legal order.

Two main issues are raised in the present research:

(1) What methodology can be used for understanding the main patterns of changes of the system (in our case – unstable social system), which has no rule in a classical point of view?

(2) What patterns can be discerned in accelerating processes in social relations in order to determine rules of law, and how can these rules be determined in transitional and unstable social systems, where no stable and certain norm is applied or acted?

In the concluding parts of each issue some inferences are tried to make, taking into account the theory of complex systems, Nash equilibrium, some features from liberal legal-understandings, and Libertarian theory etc.

Բանալի բառեր՝ *անցողիկ և անկայուն հասարակություն, իրավունքի որոշակիացում, բարդ համակարգերի տեսություն, բարդություն, Նեշի հավասարակշռություն, իրավակարգ, հասարակական կարգ:*

Ключевые слова: *переходное и нестабильное общество, определение права, теория сложных систем, сложность, равновесие Нэша, правопорядок, общественный порядок.*

Key words: *transitional and unstable society, determination of law, theory of complex systems, complexity, Nesh equilibrium, legal order, social order.*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ալվարդ Ալեքսանյան

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Հայ եկեղեցու ամենանշանավոր դեմքերից է սուրբ Գրիգոր Տաթևացին: Այնքան մեծ է նրա վաստակը, որ նա դասվել է մեր եկեղեցու սուրբ վարդապետների կարգին: Նրա իրավաքաղաքական հայացքները ձևավարվել են Տաթևի համալսարանում ուսանելու և աշխատելու տարիներին: Որպես հասարակական և եկեղեցական գործիչ՝ նա մեծ դեր է խաղացել հայ եկեղեցու ինքնության պահպանման հարցում՝ պայքարելով կաթոլիկ քարոզիչների ունիթորների (միաբարների) դեմ:

Գրիգոր Տաթևացին թողել է մեծ ժառանգություն, որոնք արժեքավոր են նաև իրավաքաղաքական մտքի պատմության զարգացման տեսակետից: Հաստատված է այն տեսակետը, որ Գրիգոր Տաթևացու աշխարհայացքի ձևավորման աղբյուրը աստվածաբանությունն է: Նրա փիլիսոփայական այս կամ այն եզրակացությունը ինչպես նկատել է Ս. Արևշատյանը, ծառայել է աստվածաբանական որևէ դրույթի հիմնավորմանը: Սակայն բազմակողմանի զարգացումը նրան չի պահել քրիստոնեության շրջանակներում: «Աստվածաբանական կեղևի տակ ապրում է գիտնականի համարձակ միտքը, որը ձգտում է դուրս գալ միջնադարյան սխոլաստիկայի շրջանակներից»:[1]

Փիլիսոփայական, տնտեսագիտական, աստվածաբանական և իրավաքաղաքական հարցերը լուսաբանելիս Գրիգոր Տաթևացին ելնում է «Աստված է սկիզբն ամենայն գոյության»[2] դրույթից: Գրիգոր

[1] Տե՛ս Հայ մշակույթի նշանավոր գործիչներ (15-18 դարեր), Եր., 1976, էջ 394:
[2] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք, որ կոչի Ոսկեփորիկ, էջ 15:

Տաթևացին մարդկանց իմաստության բնագավառներից մեկը համարել է քաղաքագիտությունը՝ պետության կառավարման արվեստը: Այս հարցի մեկնաբանության կապակցությամբ է դրսևորվել նրա իրավաքաղաքական հայացքները պետության, իշխանության, օրենքի, արդարության և անարդարության, հարստության և աղքատության, բարու և չարի, հանցագործության և պատժի, մասնավոր սեփականության և այլ հարցերի մասին:

Գրիգոր Տաթևացու հայացքների մեջ գլխավորը իշխանության առաջացման հարցն է: Նա իշխանության առաջացմանը տալիս է աստվածաբանական մեկնություն: Նա այն կարծիքին է, որ աստված երկրի վրա ստեղծել է հոգևոր և մարմնավոր իշխաններ, և դա բացատրում էր նրանով, որ մարդը կազմված է հոգուց և մարմնից: Աստված երկուսին էլ տվել է կառավարիչ և իշխան: «Եւ այսպես, երկու իշխանություն կառավարին և հաստատին մարդիկ ըստ հոգոյ և ըստ մարմնոյ»[1]: Այդ երկու իշխանություններից հոգևորը իրականացնում են հոգևոր առաջնորդները, «իսկ մարմնավոր իշխանութիւն ունի երկրաւոր իշխանք… և թագավորք… և նրանք կարգաւորեն զմարմնավոր տունս աշխարհի՝ զգեղ, զքաղաք, զերկիր…»[2]: Նա անդրադարձել է նաև այդ երկու իշխանությունների նմանությանը և տարբերությանը: Դրանց ամենագլխավոր նմանությունը համարել է այն, որ նրանք երկուսն էլ ստեղծվել են աստծու կողմից և գործում են նրա թելադրանքով: Այնուհետև այդ իշխանությունները նման են, որովհետև երկուսն էլ կոչված են կառավարելու մարդկանց մարմնապես և հոգեպես՝ չարությունները կանխելու համար: Խոսելով այդ երկու իշխանությունների տարբերության մասին, ասել է, որ մարդիկ աշխարհիկ իշխանությանը ենթարկվում են առանց իրենց կամքի և ցանկության: «Զի մարմնաւորին հաղորդիմք յոչ կամայ, բռնությամբ և իհարկե… իսկ հոգևորին հնազանդիմք կամաւորապես. Զի այս որդիական երկիուղ է. և այն ծառայողական, այն ի անասնական և այս բանական»:[1] Երկրորդ տարբերությունն այն է որ թագավորական իշխանությունը հավասարապես չի պաշտպանում և ծառայում բոլոր մարդկանց, իսկ հոգևոր իշխանությունը տարբերություն չի դնում նրանց միջև: «Զի մարմնավորն իշխե որքան մերձ է և ձեռնհաս. Իսկ հոգևորն՝ իշխե ի մերձավորս և հեռավորս»[2]: Խոսելով այդ իշխանությունների երրորդ տարբերության մասին՝ ընդգծել է, որ աշխարիկ իշխանությունը իշխում է մարդկանց՝ նրանց կենդանության ժամանակ, «իսկ հոգևորն իշխէ ի հոգին և ի մարմինն»[3]: Ընդգծելով հոգևոր իշխանության առավելությունները՝ նա առաջնությունը տալիս է հոգևոր իշխանությանը: «Հոգևոր իշխանն՝ իսկապես հանճար է և միտք… նա գլուխ է բոլոր ժողովրդեան, և առաջնորդ ամբողջ հոգևորականությանը»[4]:

Սակայն հոգևոր իշխանության մեծարումը չի խանգարում նրան, որ նա գնահատի աշխարհիկ իշխանության դերը հասարակական կյանքի կարգավորման և հայոց պետականության վերականգնման հարցում: Տաթևացին փառաբանում է երկու իշխանությունն էլ: Աստված, ասել է նա, մարդկանցից ընտրում է լավագույններին, իմաստուններին և հանճարներին և նշանակում տերեր: «Ի-մեջ մարդկանց զհանճարեղն ընտրէ աստուած և դնէ իշխան և տէր ի վրա ամբողջ մարդկանց և կարգաւորէ զնոցա ձեռն հնազանդելոց ի վրա մեծամեծաց զփոքունս...»[5]: Եվ քանի որ նրանք ունեն աստվածային ծագում, հետևաբար օժտված են նաև նրա բարությամբ հանդեպ ժողովուրդը: Այդ տեսակետից էլ բնութագրելով իսկական իշխաններին, Գրիգոր Տաթևացին ցույց է տալիս, որ նրանցից

[1] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Քարոզության, որ կոչի Ձմռան հատոր, Կ.Պոլիս, 1740, էջ 181:
[2] Տե՛ս նույն էջը:

[1] Տե՛ս նույն էջը:
[2] Տե՛ս նույն էջը:
[3] Տե՛ս նույն էջը:
[4] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 422:
[5] Տե՛ս նույն էջը:

յուրաքանչյուրը պետք է «զչարն անարգէ և զբարին գովե», «զչարն խրատե և յանդիմանէ»[1]:

Թագավորներին և իշխաններին ներկայացնում է մի քանի պահանջներ: Նրանց առաջին հերթին հարկավոր են բարեպաշտության և արդարության գործեր, որպեսզի ենթականերն էլ նույնը սովորեն նրանցից: Երկրորդ՝ նրանց հարկավոր է իմաստություն, որպեսզի կարողանան ժողովրդին առաջնորդել: Երրորդ՝ արդար իրավունքով չարերին պատժեն և բարիներին պատվի արժանացնեն, դրանով աշխարհը մնում է խաղաղության մեջ: Չորրորդ՝ ողորմած լինեն աղքատների, եկվորների և օտարների նկատմամբ: Հինգերորդ՝ սոտ չխոսեն և չխաբեն[2]:

Տաթևացին չի ընդունում մարդկային հասարակությունը՝ առանց աշխարիկ և հոգևոր իշխանության: Նրանց գործունեության շնորհիվ է, որ սահմանվում է հասարակական կարգուկանոն, ստեղծվում են ժողովրդի համար ապահով կյանքի և երկրի զարգացման նորմալ պայմաններ: Նա արտահայտել է մտքեր, որոնք վերաբերում են այդ իշխանությունների նշանակությանը: Ինչպես ոչխարի հոտն առանց հովվի չի կարող գոյություն ունենալ, այնպես էլ մարդիկ առանց իշխանների և իշխանությունների: «Որպես ի ժամանակաս յայս տեսանեմք յազգս մեր անիշխան և առանջնորդ. Իբրև զոչխար առանց հովվի…»[3]: Մտածողը հակիրճ նկարագրել է այն դառն հետևանքները, հատկապես արտագաղթի պատճառով, որոնք առաջացել են Հայաստան աշխարհում պետականության բացակայության պատճառով: «Յորժամ երկիր առանց իշխանի լինի, ժողովուրդն առանց առաջնորդի, կոխան եղեալ ամենայն մարդկանց և ցրուեալք յամենայն հողմոնց. Տգեղացեալ և չորացեալ և ապականեալ զանազան մեղոք…»[1]:

Տաթևացին հանդես է եկել քաղաքական իշխանության մասնատվածության դեմ և առաջարկել է ստեղծել ուժեղ կենտրոնացված պետություն: Հայ իշխանների միասնականությունը ապահովելու համար նա առաջարկում է թագավորական իշխանությանը օժտել անսահմանափակ իրավունքներով՝ երկրի ղեկավարման, ներքին և արտաքին հարաբերությունների կարգավորման հարցերում, հատուկ ուշադրություն դարձնելով թագավորին ենթակա իշխանների հնազանդության վրա: Թագավորի հրամաններին պետք է ենթարկվեն իշխանները և՛ պատերազմի, և՛ խաղաղության ժամանակ: Թագավորը «հրամայե իշխանին կան ամբողջ հնազանդեալքն ի բան, ի գործ, ի պատերազմ, ի խաղաղություն և յայլն»[2]: Նա դատապարտել է անհնազանդությունները, ապստամբությունները, որոնք դարեր շարունակ տեղի են ունեցել հայ իրականությունում թագավորական իշխանության և հոգևորականության դեմ: «Իսկ որք անմիտք են լինին ապստամբք և երկմիտք իշխանանց իւրեանց. և ի խավարի գնան»[3]:

Պատմական անցյալի փաստերը նկարագրելով՝ նա ցույց է տալիս այն ճակատագրական անդառնալի հետևանքները, որոնք առաջացել են թագավորների, իշխանների սխալների պատճառով: «Յորժամ կարգավորն և իշխանն սխալին, ամբողջ ժողովուրդքն և իշխեցեալքն ընդ նոսին սխալին և անկարգանան»[4]: Նա հանգել է այն եզրակացության, որ հայ պետականության կորուստը արդյունք է այն բանի, որ թագավորները, իշխանները հոգևորականները, ինք-

[1] Տե՛ս նույն էջը:
[2] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Սողոմոնի գրքերի մեկնությունը, Եր., 2009, էջ 66:
[3] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 423:

[1] Տե՛ս նույն էջը:
[2] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 422:
[3] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Քարոզության, որ կոչի Ձմռան հատոր, Կ.Պոլիս, 1740, էջ 194:
[4] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, 423:

նիշխանության ձգտելով, չխորհրդակցեցին միմյանց հետ երկրի կառավարման հարցում, հատկապես երկրի համար ճակատագրական պահերին: «Եւ մեր առաջնորդք և իշխանք հոգևոր կամ մարմնավոր՝ որք ինքնիշխանութեամբ կատարեն զգործն առանց խորհրդակցի», որի պատճառով «բարձեալ է իշխանութիւն և ավերեալ երկիրն և տարագրեալ են ժողովուրդք մեր ի վերա երկրի և ցրվեալ յամբողձ ազգս»[1]:

Տաթևացին խոսում է հռոմեական կայսրության մասին, որտեղ թագավորներն ու առաջնորդները, իշխաններն ու զորավարները երկրի կառավարման հարցերում խորհրդակցում են և պահպանում իրենց պետականությունը: Նրանք «համաձայնությամբ զիշխանութիւն վարէին», որի հետևանքով «տիրեն մինչև ցայսօր»[2]: Այստեղից կարելի է ենթադրել, որ Գրիգոր Տաթևացին ուսումնասիրել է հռոմեական պետության պատմությունը, և հայ մտածողը, խոսելով հայկական վերականգնվող պետության մեջ երկիրը կառավարելու հարցում խորհրդակցելու մասին, նկատի է ունեցել դոմինանտի՝ դարաշրջանում հռոմեական կայսրին կից ստեղծած պետական խորհուրդի գործունեությունը, որը զբաղված էր քաղաքական հիմնական հարցերի քննարկմամբ, օրենքների մշակմամբ, ֆինանսական գործունեությամբ: Այս տեսակետից էլ անհրաժեշտ ենք համարում կանգ առնել Գրիգոր Տաթևացու իրավական այն հայացքների վրա, որոնք վերաբերում են ապագա հայկական պետության ձևին և ցույց տալ, թե նա ինչ նպատակ է հետապնդել՝ ասելով «երկիրը կառավարելու ժամանակ խորհրդակցել»:

Բացատրելով իր միտքը՝ Գրիգոր Տաթևացին նշել է, որ «մի մարդն կարէ զմիոյ տան շինուին խորհիլ, այլ մի մարդն զբազմաց ոչ կարէ»[3], այսինքն՝ երկիրը կառավարելու ժամանակ մի մարդ կդժվարանա լուծել թագավորության ներքին և արտաքին հարցերը:

[1] Տե՛ս նշվ. երկը, էջ 424:
[2] Տե՛ս նույն էջը:
[3] Տե՛ս նշվ. երկը, էջ 423:

Հետևաբար, թագավորին կից պետք է լինի խորհրդակցական մարմին, որտեղ պետք է գտնվեն իմաստուն մարդիկ նրանց հետ երկրի կառավարման հարցերով խորհրդակցելու համար: Երկրի ղեկավարը «պարտ է բազմաց ի մի վայր ժողովիլ և զբազում երկրին զօգուտն գտանել...՝ համաձայնությամբ խորհրդելով վարել զիշխանությունն...»[1]: Որպեսզի ցուցադրի խորհուրդ անելու նշանակությունը, նա բերել է իմաստունների օրինակը՝ ասելով, որ նրանք նույնիսկ կարիք ունեն խորհրդակցելու այս կամ այն խնդրի շուրջ: «Եվ իմաստուն մարդն հանապազ խնդրէ իվր խորհրդակից և օգնական մտացն իւրոց»[2]: Այստեղ էլ նա եզրակացրել է, որ եթե իմաստուն մարդը խորհրդի կարիք ունի, ապա իշխանավորները, որոնք զբաղվում են բազմաթիվ գործերով, գյուղի, քաղաքի, երկրի կառավարման հարցերով, խորհրդակցելու ավելի շատ կարիք կունենան: Այդ պատճառով էլ նա առաջարկում է երկրի այս կամ այն հարցը լուծելու համար խորհրդակցել:

Իր այս մտքերը հաստատելու համար Գրիգոր Տաթևացին խոսել է աստծու կողմից սահմանված «օրինաչափությունների» մասին: Եթե չի կարող պարոն լինել առանց ճորտի, հարուստն առանց աղքատի, ապա չի կարող լինել միտքն առանց խորհրդի: Հասարակության մեջ «միտքն կարոտ է առաջնորդի և խորհրդակցի»[3]: Եվ այսպես ապագա հայկական թագավորության համար նա առաջ է քաշել միապետական ձևը, թագավորին կից խորհրդակցական ժողովի ստեղծման պայմանով, այնպես, ինչպես հռոմեական կայսրության դոմինանտի ժամանակաշրջանում, որտեղ տեղական վարչություններն անգամ ունեցել են խորհրդակցական մարմիններ, ընտրովի պաշտոնյաների հսկողության տակ: Գրիգոր Տաթևացու ներքոհիշյալ միտքը բխում է հռոմեական կայսրության պետական կառուցվածքի այդ փորձից: «Մարդս ոչ է ինքնաբավական, այլ կա-

[1] Տե՛ս նույն էջը:
[2] Տե՛ս նույն էջը:
[3] Տե՛ս նույն էջը:

բոտ է ստեղծիլ և միմեանց օգնական լինել, որպես յայս է ի զեօղս և ի քաղաք՝որք ի մի վայր ժողովիմք… և ի խորհուրդն կցորդիլ միմյանց. և զուղիղն գտանել…», «Եւ առաւվել քան զամենայն պիտանաւորուի ունին առ միմեանս զժողովիլն ի խորհուրդ. և ապա համաձայն նոցին խորհրդով՝ վարել զշինություն աշխարհի[1]»: Թեպետ երկրի կառավարման համար խորհրդակցական մարմնի առկայությունը կարևոր է, սակայն հասարակությունը պետք է կառավարվի մեկ միասնական կամքի կողմից: Երկրի կառավարման հարցում խորհրդակցական մարմնի դերը կարևորելով, Տաթևացին այնուամենայնիվ կառավարման լավագույն ձև է համարում միապետությունը: Միասնական կենտրոնացված միապետությունը համարում է երկրի նորմալ զարգացման պայման: Տարբեր հասարակական խմբերի շահերը ներդաշնակեցնում է երկրի միապետը երկրի խորհրդակցական մարմնի օգնությամբ: «Գրիգոր Տաթևացին բացարձակ միապետությունը հակադրում է սահմանադրական միապետությանը, որը և նա համարում է կառավարման ամենառացիոնալ ձևը»:[2]

Այսպիսով՝ Տաթևացին արտահայտել է առաջադիմական քաղաքական իրավական գաղափարներ ապագա հայկական թագավորության պետական կառավարման ձևի մասին, լավագույն կառավարման ձև համարելով կենտրոնացված միապետական կառավարման ձևը, որտեղ թագավորին և տեղական իշխանություններին կից պետք է ստեղծվեին խորհրդակցական մարմիններ:

Սակայն ինչպիսի պետական կառավարման ձև էլ ունենա հայկական թագավորությունը, չի կարող իր ազգի անվտանգությունն ու բարեկեցությունը պաշտպանել, եթե թագավորը, իշխանները և մյուս պաշտոնյանները չկատարեն օրենքի պահանջները: Ընդ որում օրենքների պահանջների կատարման հարցում նա տարբերություն չի դնում աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև: Նրանք «համապատասխան օրենքներով պետք է ղեկավարեն իրենց ծառաներին, ամբողջ ժողովրդին: «Մարմնաւոր իշխանքն՝ քաղաքական օրինօք կարգաւորեն զինազանդեալս. և հոգևորքն հոգևոր օրինօք»[1]: Նա օրինականության ապահովման հարցը պայմանավորել է իշխանների, դատավորների և մյուս պաշտոնյանների կողմից օրենքների խստագույն կատարմամբ: «Զի իշխան և դատաւոր կարէ ուղղությամբ դատել և կարէ անիրավութեամբ»[2]: Նա պահանջել է ղեկավարվել գործող օրենքներով հայրենիքի անկախությունը և ազգի խաղաղ կյանքը ապահովելու համար:

Գրիգոր Տաթևացին մեծ նշանակություն է տվել հասարակական հարաբերությունների իրավական կարգավորմանը այն հաստատ համոզմամբ, որ առանց մարդկանց վարքագծի կանոնների՝ թագավորից մինչև ծառա իրենց դերում չեն գտնվի: Նա գտնում էր, որ երկիրը լավ կառավարելու համար պետք ունենալ լավ օրենքներ և ղեկավարվել օրենքով: Տաթևացին օրենքները բաժանում է երկու խմբի՝ «հարկաւոր և հնարաւոր: Հարկավորն այն է, որ անփոփոխելի է. Ոչ յաւելուլ կարէ և ոչ նուազուլ: Ինչպէս սահմանումն մարդոյ: Եւ հնարաւորն փոփոխելի է, որ յաւելուլ կարէ և նուազուլ: Ինչպէս պարագայք մարդոյ սոյնպէս հարկաւոր սահմանումն, և օրենքն է մեզ»[3]: Այսպիսով Տաթևացին տարբերում է աստվածային և մարդկային օրենքները: Աստվածային օրենքները հավիտենական և անփոփոխ են, իսկ մարդկայինները՝ փոփոխվում են ժամանակի ընթացքում, քանի որ փոխվում են հասարկական կյանքի պայմանները: Մարդկային օրենքները պետք է համապատասխանեցվեն ժամանակի պահանջներին:

---

[1] Տե՛ս նույն էջը:

[2] Տե՛ս **Թովմասյան Ներսես**, Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսական հայացքները, Եր., 1966, էջ 71:

[1] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի,** Գիրք Քարոզության, որ կոչի Զմռան հատոր, Կ.Պոլիս, 1740, էջ 348

[2] Տե՛ս նույն էջը:

[3] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի,** Համառաւտ հաւաքումն յառակաց գրոցն Սողոմոնի, ՀՀ Մատենադարան, ձեռագիր 1264, էջ 373ա:

Տաթևացին, խոսելով հասարակական կյանքում օրենքի նշանակության մասին, ասել է, որ օրենքն է մարդուն ուղղորդում, նրան հետ պահում չար արարքներից: «Օրէնքն դարձուցանեն զմեզ ի չար ճանապարհեն սատանայի. և բերեն յուղիղ ճանապարհն»[1]:

Կարևորելով օրենքների սահմանման և կիրառման անհրաժեշտությունը՝ նա դրանք բարձրացնում է մինչև աստվածային պատվիրանների մակարդակը: «Հաճախ դժվար է լինում որոշել, թե խոսքը որ օրենքին է վերաբերում՝ քաղաքական-իրավակա՞ն օրենքներին, թե՞ կրոնական պատվիրաններին, որովհետև Տաթևացու մոտ դրանք միահյուսվում են»[2]: Նա իր աշխատություններում արտահայտել է այն միտքը, որ մարդկային և աստվածային օրենքները բխում են արարչի բնույթից: Այդ պատճառով էլ պետական օրենքների չկատարելը նա դիտել է իբրև աստվածային կամքի խախտում: «Ինչ զոր ասէ քեզ օրէնքն աստուածային՝ լուր և ունկնդիրր. Զի մի լիցիս տգէտ և ասիցես, թե ոչ գիտեմ զօրէնքն աստվածային. և տգիտութեամբ ընդ անպարիշտն կորնչիս»[3]: Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Տաթևացին մեծ նշանակություն է տալիս օրենքների պահանջների կատարմանը և պահանջում է, որ յուրաքանչյուր ոք ենթարկվի օրենքին և կամովին կատարի օրենքի պահանջները: «Եւ մի քններ զօրէնս, թէ զայս վասն էր պահեմ. Կամ զինչ օգուտ կայ ինձ յայսմանէ»:[4]

Խոսելով օրենքների կատարման մասին՝ նա անդրադարձել է նաև իրավագիտակցության նշանակության հարցերին՝ ընդգծելով, որ օրենքների պահանջների կատարումը կապված է նաև նրանց պահանջներին ծանոթ լինելու հետ: Օրենքները հաջողությամբ կի-

[1] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Գիրք Քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 11:
[2] Տե՛ս **Թովմասյան Ներսես**, նշվ. աշխ., էջ 69:
[3] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 10:
[4] Տե՛ս նույն էջը:

րացվեն այն դեպքում, երբ կատարողները ծանոթ են և հասկացել են դրանց պահանջները: «Նախ լսել զօրենս և ուսանէլ…ի մտի պահել», գրել է նա[1]: Այնուհետև ընդգծել է, որ օրենքները կատարողները օրինավոր են, չկատարողները՝ անօրեններ և տգետներ: Տաթևացու այս գաղափարները վկայում են այն մասին, որ նա մեծ նշանակություն է տվել հասարակական կյանքում օրինականության պահպանման հարցին:

Հին հունական փիլիսոփաների օրինակով՝ Տաթևացին գտնում է, որ օրենքները պետք է հանդիսանան իմաստուն մարդկանց մտքի արգասիքը: Օրենքների մշակման և ընդունման հարցում նա նորից խոսել է խորհրդակցելու նշանակության մասին՝ նշելով, որ մի քանի մարդկանց համատեղ խորհրդակցելու միջոցով ստեղծված օրենքները ավելի կատարյալ կլինեն: «Ի խորհուրդն կցորդել միմյանց և զուղիղն գտնել»[2]: Արդեն ընդունված օրենքները պետք է պահպանվեն հանուն արդարության պաշտպանության: Ընդ որում՝ նրա՝ որպես իր ժամանակի մտածողի ըմբռնմամբ անարդարություն չէ այն, երբ օրենքը մարդկանց որոշ մասին զրկել է տնտեսական և քաղաքական իրավունքներից, կամ մեկին դարձրել է տեր, մյուսին ծառա: Ընդհակառակը, անարդարություն է, երբ ծառան չի ենթարկվում տիրոջը: Նրանք, ովքեր հետևում են արդարությանը, աստվածապաշտ են, անարդարության հետևելը՝ անաստվածություն: Նա պահանջել է իշխողներից և պաշտոնյաներից արդարացի լինել: «Իշխանութիւն պարտ է արդարությունը իրաւմանց անել…»[3]:

Գրիգոր Տաթևացին իր «Գիրք Քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր» աշխատության ՃԻԱ գլուխն անվանել է «Վասն դատաւորաց», որտեղ խոսել է արդարության պաշտպանության հարցում դատավորի դերի մասին: Նա դատավորին ներկայացնում է մի քա-

[1] Տե՛ս նույն էջը:
[2] Տե՛ս նշվ. աշխ., էջ 423:
[3] Տե՛ս նշվ. աշխ., էջ 424:

նի պահանջներ, որոնք երաշխիք են դատավորի կողմից արդարության իրականացման հարցում: Այդ պահանջների մի մասը վերաբերում է դատավորի այն հատկանիշներին, որոնք անհրաժեշտ ն նրան դատվարության իրականացման համար, իսկ պահանջների մյուս մասը վերաբերում է նրա մարդկային հատկանիշներին: «Այլևս չորս իր հարկավոր է դատաստանին: Նախ իմաստութիուն. զի ընտրեսցէ զճշմարիտն և զսուտն, երկրորդ՝ արդարություն. զի մի՝ ակն առցէ կամ երկիցէ, երրորդ՝ ամուր հավատ, զի հաստատ կացցէ՝ ի բանն որպես՝ ի հաւատ, չորրորդ փարթամ ընչիւք, զի մի կարեաց կաշառս առցէ»: Դատավորը պետք է ունենա հետևյալ մարդկային հատկանիշները՝ «առաջին՝ խոնհարություն, զի լսիցե զգանգատն, երկրորդ հեզություն, զի մի բարկասցի, երրորդ համբերություն,զի մի շուտափոյթ լիցի: Չորրորդ՝ զի զօրութ տացե զպատիժն և զպատիժն դատախազաց»[1]:

Այս բոլոր հատկանիշները թվարկելով՝ նա առաջնային և կարևոր է համարում նաև դատավորի կրթվածությունը և աշխարհիկ ու հոգևոր օրենքների իմացությունը: «Իսկ զառաջինն պարտ է ստանալ զիմաստութին: Նախ կրթիլ և վարժիլ ուսմամբ զգիր դատաստանացն և զկանոնացն…»[2]: Արդարացի վճիռ կայացնելու համար դատավորը նախ պետք է բազմակողմանի և օբյեկտիվ քննություն կատարի, հարցաքննի վիճող կողմերին և վկաներին և իր իմաստությամբ և կյանքի փորձով յուրաքանչյուր դեպքում բացահայտի մարդկանց չարությունը, եթե նրանք կատարել են հանցագործություն, և բարությունը, եթե նրանք անմեղ են: «Դատավորն ոչ միայն քննող է, այլև հատուցանող բարեացն և չարացն»[3]:

Գրիգոր Տաթևացին նշել է, որ մեղքն ու պատիժը գտնվում են անհրաժեշտ փոխկապակցության մեջ՝ չկա պատիժ առանց մեղքի

[1] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 458, 459:
[2] Տե՛ս նույն էջը:
[3] Տե՛ս նշվ. երկը, էջ 459-460:

սկզբունքով: Հետևաբար մեղքի ապացուցումն անհրաժեշտ է: «Ի դատաստանն նախ պարտ է լսել զերկուց խօսսն հանդարտությամբ և. Ի միտս քննել… և ապա զվճիռ իրավանցն հատուցանել»[1]: Նա տարբերել է նաև կատարողը դրդողից և հայտնել այն միտքը, որ մարդկանց պատասխանատվության ենթարկելիս պետք է հաշվի առնեն հանցագործության կատարման մեջ նրա մեղքի աստիճանը: Օրինակ՝ նա խոսել է իշխանի մասին, որի հրամանով դահիճը կատարել է սպանություն: Այստեղից էլ, ըստ նրա՝ առաջանում են պատժի տարբեր տեսակներ՝ մեղքին համապատասխան: «Մեղքն և պատիժն՝ ունին զանազանուի ըստ տեսակին և զի զանազան են տեսակք մեղացն և զանազան են տեսակք պատժոցն և բազում»[2]: Պատժի հարցում նրա հայացքներում դրսևորվել է հայ իրականությունում տարածում ստացած «դատաստանն հատուցումն է գործոց» քրիստոնեական գաղափարախոսությունը:

Գրիգոր Տաթևացին խոսել է նաև հանցագործության առաջացման մասին: Աստված մարդուն ստեղծել է բարի և անձնիշխան կամքով: Մարդը իր բնույթով բարի է: Օժտված լինելով ազատ կամքով՝ մարդիկ իրենք են կյանքի ընթացքում ընտրում այս կամ այն վարքագիծը: Նրանք գործում են իրենց հայեցողությամբ և կատարում չար և բարի գործեր: Մարդիկ տարբեր պատճառներով կատարում են չարագործություններ: Հետևաբար չարը մարդկանց մոտ առաջանում է կյանքի ընթացքում. նրա խոսքերով ասած՝ այն «եկամուտ է»: Հետևելով քրիստոնեական աշխարհայեցողությանը՝ նա արտահայտում է այն միտքը, որ չարը ի սկզբանե առաջացել է սատանայի դրդմամբ: Չնայած մարդն իր առաջին մեղքը կատարել է սատանայի դրդմամբ, սակայն մարդու բոլոր չարագործությունների պատճառ համարել սատանային, ճիշտ չի լինի: «Մեղս մեր, և զփոր-

[1] Տե՛ս նույն էջը:
[2] Տե՛ս նշվ. երկը, էջ 144:

ձութինս մարմնոյ ի սատանայէ ասել՝ սուտ է»[1]: Անկախ չարի առաջացման պատճառից, այն պետք է կանխել: Չարիքը կանխելու անհրաժեշտ միջոց են համարվում պետական իշխանությունը և օրենքը: Ուշադրության արժանի է, որ նա չարությունը չի կապում որևէ դասի հետ: Հարուստների և աղքատների մեջ կան և՝ բարի, և՝ չար մարդիկ «մինն բարի և միւսն չար»: Նա ընդգծել է այն հանգամանքը, որ հոգևորականների մեջ ավելի քիչ է չարությունը: «Կրօնաւորքն՝ այլ մեծ ոնին զբարին, քան զաշխարհականս»[2]: Գրիգոր Տաթևացին չարագործություն է համարում մարդկանց հանրորեն վտանգավոր բազմաթիվ արարքներ, օրինակ՝ ագահությունը, կաշառակերությունը, մարդասպանությունը, պոռնկությունը, գողությունը, վաշխառությունը, զրպարտությունը, նախանձությունը, աղանդավորությունը և այլն:

Գրիգոր Տաթևացին արտահայտում է այն միտքը, որ աստված բոլորին ստեղծել է հավասար և ազատ ապրելու համար: «Եւ ոչ ստեղծեաց աստուած երկու Ադամ. մին յոսկոյ վասն իշխանաց. և մին ի կովոյ վասն աղքատաց. այլ մին Ադամ, և այն ի հողոյ: Եւ ամենայքն մեծամեծք և փոքրունք՝ ի նման է յառաջ եկին»[3]: Այս մտքերով նա զարգացրել է բնական իրավունքի տեսությունը: Օրենքի առաջ նույնպես բոլորը հավասար են: Մարդիկ նույնպես պետք է հավասարապես ենթարկվեն օրենքի պահանջներին: «Յօրէնսն մեծ և փոքր չկայ, այլ հավասար այ հրաման է և պարտ է մեզ պահել»[4]:

Գրիգոր Տաթևացին անդրադարձել է նաև հարստության առաջացման ուղիների մասին: Այս տեսակետից արտահայտել է այն միտքը, որ մարդիկ, դարերի ընթացքում պաշտպանելով իրենց

[1] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Քարոզության, որ կոչի Զմռան հատոր, Կ.Պոլիս, 1740, էջ 451:
[2] Տե՛ս նշվ. երկը, էջ 290:
[3] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 91:
[4] Տե՛ս նշվ. երկը, էջ 12:

աստվածատուր էությունը, կարողացել են աշխատել և հարստանալ: «Յաշխատուրեանց վաստակոց…և այս բարի է»[1]: Չի դատապարտում հարստության առաջացման մեկ այլ ուղին, երբ մարդիկ պատահական գտնում են հարստություն: Հարկեր հավաքելու միջոցով ունեցվածքի տեր դառնալը համարել է աստծու կամքի արտահայտություն: Այս ճանապարհով հարստություն ձեռք բերելու հարցում ագահություն չի դրսևորվում, հետևաբար նա այդպիսի մեծատուններին չի դատապարտում և անարգում, ընդհակառակը, գովերգում է ասելով «Եւ է մեծութիւն, որ արդարութեամբ է հալալ վաստակօք. Այս պարգև է աստուածային»[2]: Գրիգոր Տաթևացին քննադատում է այն անձանց, որոնք հարստացել են ուրիշի աշխատանքը յուրացնելու և մարդկանց զրկանքների միջոցով... Ագահության հետևանքով հարստություն է կուտակվում «զրկանօք և անիրաւութեամբ… և այս ոչ է կամոք աստուածային…»[3]:

Իր քարոզներում և խրատներում նա գովերգել է աշխատանքն ու աշխատասիրությունը, ցույց է տվել, որ չաշխատող մարդը ոչ միայն աղքատ է, այլև թույլ և վատառողջ և հասարակության կողմից մերժված: Աշխատող մարդիկ կառուցում են երկիրը, զարդարում են բնությունը, զարգացնում են գիտությունը, պաշտպանում են պետությունը և ժողովրդին: Նա բացատրել է, որ աշխատանքը ոչ միայն նյութական բարիքներ է ստեղծում ապրելու, այլև պայմաններ է ստեղծում հոգևոր զարգացման համար: Հետևաբար, առանց աշխատանքի մարդիկ չեն կարող պաշտպանել իրենց գոյությունը թե՛ մարմնապես, թե՛ հոգեպես: «Հոգևոր և մարմնաւոր, առանց աշխատութեան ոչ գտանին»[4]:

[1] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 664:
[2] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 427:
[3] Տե՛ս նշվ. աշխ., էջ 426:
[4] Տե՛ս նշվ. աշխ., էջ 114:

Հայ մտածողի հայացքներում կան առաջադիմական մտքեր ընտանեկան հարաբերությունների՝ ամուսինների, ծնողների և որդիների իրավունքների և պարտականությունների մասին: Հայտնում է այն կարծիքը, որ տղամարդը և կինը անբաժանելի են: Տղամարդը անսահմանափակ իրավունքներ ունի կնոջ նկատմամբ: «Այրն գլուխ է կնոջ…», «արդ այրն գլուխ է և իշխան. և կինն մարմին է նման և անդամ և կապակցյալ են սիրով և օրհնութեամբ պսակին մի մարմին եղեալ»[1]: Տղամարդը չի կարող օտար կնոջ գլուխ համարվել: «Այրն ոչ լինի գլուխ օտար կնոջ»[2]: Հետևաբար նա պաշտպանել է ամուր ընտանիք ստեղծելու գաղափարը: Ընտանիքում ծնողները և զավակները ունեն իրավունքներ և պարտականություններ: Նա այն կարծիքին է, որ ծնողները մարդկային հասարակության գլխավոր դերակատարն են: Աստված, ասել է նա, հոգի է ստեղծում միայն ծնողների օգնությամբ: «Զի առանց ծնողացն՝ ոչ զհոգի ստեղծանէ, Աստուած և որ մարդ կազմէ յորովայնի»[3]: Պատվավոր այս դերի, ինչպես նաև երեխաներին պահելու և մեծացնելու գործում նրանց դժվարագույն գործողությունների համար, նա ընդգծել է, որ աստված ազդարարել է՝ ով ծնողին «անարգե՝ զիս անարգե, և զձեզ ընդունի՝ զիս ընդունի»[4]: Միաժամանակ ծնողներին պարտավորեցրել է ոչ միայն պահել, հագցնել, կերակրել, այլև ուսում տալ և երեխաների մեջ սերմանել բնավորության բարի գծեր, սովորեցնել նրանց հոգեպես հնազանդվել աստծուն, իսկ մարմնապես թագավորին և իշխանին: Որդիներին խրատում է հնազանդ լինել և կատարել ծնողների հանձնարարությունները, ի հատուցումն այն տանջանքների, որ նրանք կրում են իրենց երեխաների համար:

[1] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Քարոզության, որ կոչի Զմռան հատոր, Կ.Պոլիս, 1740, էջ 193:
[2] Տե՛ս նշվ. աշխ., էջ 194:
[3] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741, էջ 18;
[4] Տե՛ս նշվ. աշխ., էջ 19:

Այսպիսով՝ հայ եկեղեցու գործիչներից մեկը՝ Գրիգոր Տաթևացին (1346-1409), թողել է ծավալուն մատենագրական ժառանգություն, որն արժեքավոր է նաև հայ իրավաքաղաքական մտքի տեսանկյունից: Գրիգոր Տաթևացին հանդես է եկել քաղաքական իշխանության մասնատվածության դեմ և արտահայտել է այն գաղափարը, որ ապագա հայկական թագավորության համար կառավարման լավագույն ձևը կենտրոնացված միապետությունն է, որտեղ թագավորին և տեղական իշխանության մարմիններին կից պետք է ստեղծվեին խորհրդակցական մարմիններ: Կարևոր է համարել երկրում արդարացի օրենքների սահմանումը և օրենքների պահանջների կատարումը: Տաթևացին տարբերում է աստվածային և մարդկային օրենքները: Աստվածային օրենքները հավիտենական և անփոփոխ են, իսկ մարդկային օրենքները փոփոխվում են հասարակական կյանքի պայմանների հետ: Նրա կարծիքով մարդիկ ծնվում են հավասար և գործում են իրենց անձնիշխան կամքով՝ կատարելով չար և բարի գործեր: Հանցագործությունը կանխելու միջոց է համարել պետական իշխանությունը և օրենքների պահանջների պահպանումը: Իր քարոզներում և խրատներում գովերգել է աշխատանքը և արդարացի է համարել աշխատելու միջոցով հարստանալը:

ПОЛИТИЧЕСКИЕ И ПРАВОВЫЕ ВЗГЛЯДЫ ГРИГОРА ТАТЕВАЦИ

Алвард Алексанян

Ассистент кафедры теории и истории государства и права ЕГУ, кандидат юридических наук

Одним из авторитетнейших деятелей армянской церкви был Григор Татеваци (1346-1409), который оставил богатое письменное наследие, важное с точки зрения армянской политико-правовой мысли. Григор Татеваци выступал против разобщённости политической власти Армении. Он выразил идею, что лучшая форма правления будущего армяского царства – централизованная монархия, где должны быт созданы совещателние органы при царе и его наместниках. Татеваци считал важным установление справедливых законов в стране и выполнение их требований. Татеваци различал два типа законов – божественные и человеческие. Божественные законы вечны и неизменны, а человеческие меняются вместе с изменением условий общественной жизни. По его мнению, люди рождаются равными. Человек действует согласно своей свободной воле, по которой совершает добрые и злые дела. Он считал, что наличие государственной власти и соблюдение требований законов являются средствами предотвращения преступлений. В своих проповедях и наставлениях он восхвалял труд и считал, что обогощение трудом справедливо.

POLITICAL AND LEGAL THOUGHTS OF GRIGOR TATEVATSI

Alvard Aleksanyan

Assisting professor at the YSU Chair of Theory and History of State and Law, Candidate of Legal Sciences

One of the most influential figures of Armenian Church was Grigor Tatevatsi (1346-1409) who left abundant written heritage, which is valuable from the viewpoint of development of Armenian political and legal thought. Grigor Tatevatsi was against the disunity of the Armenian political power. He had been for the idea that the best way of ruling in the future Armenian Kingdom was centralized monarchy, which should have had consulting boards attached to the king ant the local rulers. He considered very important establishing of just laws and fulfillment of those laws in the country. Tatevatsi distinguished two kinds of laws: divine laws and human laws. He thought divine laws to be eternal and unchanged and the human laws changing along with the changed conditions of social life. He thought that men are born equal and they act according to their own free will, fulfilling good and evil deeds. He also thought that the presence of the state power and preservation of the requirements of law are the means or prevention of crime. He would praise labour in his preaches and exhortations and considered that getting rich by labour is just.

Բանալի բառեր՝ *սուրբ, բարի և չար, հոգևոր և մարմնավոր իշխաններ, խորհրդակցել, աստվածային և մարդկային օրենքներ, անձնիշխան կամք, խրատ:*

Ключевые слова: *святой, добрые и злые дела, духовная и светская власти, совещаться, божественные и человеческие законы, свободная воля, наставление.*

Key words: *holy, good and evil, religious and secular rulers, consult, divine and human laws, own will, exhortation.*